

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ՎԱՏԱՆՈՒԹՅԱՆ ԲՎԵ՝ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ՈՒ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

Նոյեմբերի 26-ին Վրաստանի 9-րդ գումարման նորընտիր խորհրդարանը վստահության քվե հանձնեց վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլուն, նրա գլխավորած կառավարության նոր կազմին և վաչապետի կողմից խորհրդարանականներին ներկայացված «Ազատություն, արագ զարգացում, բարգավաճում» կառավարական ծրագրին:

Կառավարության նոր կազմի եւ ներկայացրած ծրագրի օգտին քվեարկեցին Վրաստանի խորհրդարանի 146 պատգամավորներից 110-ը: Ընդդիմության ներկայացուցիչ պատգամավորները քվեարկությանը չմասնակցեցին: Նշենք, որ խորհրդարանական

ընդդիմության «Միասնական ազգային շարժում» եւ «Հայրենասերների ալյանս» կուսակցություններից պատգամավորները խիստ քննադատության ենթարկեցին ինչպես կառավարության նոր կազմը, այնպես էլ՝ կառավարական ծրագիրը:

Արդեն նոյեմբերի 27-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին ստորագրեց Գիորգի Կվիրիկաշվիլուն վարչապետ նշանակելու մասին կարգադրությունը, իսկ հաջորդ օրը վարչապետն ստորագրեց նոր նախարարների նշանակման հրամանագիրը:

Ստորեւ ներկայացնում ենք Վրաստանի նոր կառավարության կազմը՝ վարչապետի եւ նախարարների հակիրճ կենսագրություններով:
(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼ Է ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼՈՒՆ



Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը շնորհավորական ուղերձ է հղել Գիորգի Կվիրիկաշվիլուն Վրաստանի վարչապետի պաշտոնում վերանշանակվելու կապակցությամբ:



Հայաստանի նախագահը հույս է հայտնել, որ առկա փոխգործակցության ներուժն ու գործընկերությունը խորացնելու երկու բարեկամ երկրների հաստատակամությունը կնպաստի հետագայում եւս շարունակաբար զարգացնելու ու նոր խթան հաղորդելու հայ եւ վրացի ժողովուրդների միջեւ ձեւավորված եղբայրական հարաբերություններին ու փոխշահավետ համագործակցությանը:

ԲԱՐՁՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ՝ ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆԸ

Նոյեմբերի 29-ին Հայաստանում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Գիորգի Սագանելիձեն հանդիպում ունեցավ Հայաստանի վարչապետ Կարեն Կարապետյանի հետ:



Հանդիպմանը Կարեն Կարապետյանը, բարձր գնահատելով Հայաստանի եւ Վրաստանի միջեւ քաղաքական երկխոսությունը, նշեց, որ պետք է ակտիվ աշխատել առեւտրատնտեսական համագործակցությունը եւս այդ մակարդակին հասցնելու եւ առկա ներուժը լիարժեք իրացնելու ուղղությամբ:

Իր հերթին, Գիորգի Սագանելիձեն ընդգծեց, որ վրաց-հայկական հարաբերությունները հիմնված են երկու ժողովուրդների դարավոր բարեկամության վրա,

եւ Վրաստանը կարելի է Հայաստանի հետ փոխշահավետ գործակցության զարգացումը:

Հանդիպմանը Հայաստանի վարչապետը եւ Հայաստանում Վրաստանի դեսպանը քննարկեցին երկու երկրների փոխգործակցության օրակարգին վերաբերող հարցեր: Ձրուցակիցները, մասնավորապես մտքեր փոխանակեցին էներգետիկայի, տրանսպորտի, փոխադրումների եւ այլ ոլորտներում համատեղ ծրագրերի ընթացքի, ինչպես նաեւ հետագա անելիքների շուրջ:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՄԵՐ ԳԼԽԱՎՈՐ ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՆ Է»



«ՄԵՐ ԳԼԽԱՎՈՐ ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՄ-ԻՆ ՈՒ ՆԱՏՕ-ԻՆ ՇԵՏԵՎՈՂԱԿԱՆ ԻՆՏԵՐՈՒՍՆ Է»
Ներկայացնելով կառավարության գործունեության ծրագիրը՝ Վրաստանի վարչապետի թեկ-

Նոյեմբերի 26-ին Վրաստանի խորհրդարանում շարունակվեցին երկրի կառավարության նոր կազմի վստահության քվեի հանձնման հետ կապված քննարկումները: Երկրի կառավարության նոր կազմը, գործադիր իշխանության գործունեության ծրագիրը պատգամավորներին ներկայացրեց Վրաստանի վարչապետի թեկնածու Գիորգի Կվիրիկաշվիլին: Գործադիր իշխանության ղեկավարը խորհրդարանի պատգամավորներին ներկայացրեց երկրի արտաքին եւ ներքին առաջնահերթությունները:

Մածու Գիորգի Կվիրիկաշվիլին ՆԱՏՕ-ին եւ ԵՄ-ին Վրաստանի ինտեգրումը, հարեւանների հետ համագործակցությունը եւ ՌԴ-ի հետ հարաբերությունների նորմալացման քաղաքականության շարունակումն անվանեց հիմնական առաջնահերթությունների թվում:

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՄԱԿ-Ը ԿԱՆԻ ՀՆԱՐԱՎՈՐԻՆԸ ԲՈՒՆԱԶԱՎԹՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ

Նոյեմբերի 26-ին Աշխարհադուրմ աշխատանքն սկսեց ՄԱԿ-ի հովանու ներքո անցկացվող կայուն տրանսպորտի հարցերին նվիրված գլոբալ խորհրդածողվը, որի աշխատանքին մասնակցում էր Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին:



համաշխարհային անվտանգության եւ կայունության ապահովման, ինչպես նաեւ մարդու իրավունքների ու պետությունների կայուն զարգացման աջակցության գործում: Վրաստանի նա-

խագահը Պան Գի Մունին շնորհակալություն հայտնեց ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի պաշտոնում կատարած աշխատանքի եւ
(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ԵՎՐԱՍԻՈՒԹՅՈՒՆ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ԵՎ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ



Այցի շրջանակներում, Գիորգի Կվիրիկաշվիլին հանդիպում ունեցավ Եվրասիոնի Վրաստանի նախագահ Մարտին Շուլցի, Եվրասիոնի կլիմայի եւ

Նոյեմբերի 30-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին աշխատանքային այցով մեկնեց Բրյուսել:

Էներգառեսուրսների հարցերով եվրակոմիսար Արիաս Կանետի, Եվրասիոնի Վրաստանի արտաքին գործերի կոմիտեի նախագահ Էլմար Բրոկի, Եվրակոմիսար Յոհաննես Յաննի, առեւտրի հարցերով եվ-
(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԱԴՐԱՄ

ԼԱՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑԵՑ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻ ՆՇԱԳԻԾԸ

ՎՐԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Դեկտեմբերի 1-ին վավերացվեց վրացական տարադրամի՝ լարիի անմախաղեպ թռիչքն ու անկումը:



Առանձին կոմերցիոն բանկերում, ԱՄՆ դոլարի համեմատությամբ, լարիի արժեքը հասավ 2,63-ի նշանագծին, թեպետ օրվա վերջում այն նվազեց մինչեւ 2,55-ը: Այսպիսով, լարիի գերազանցեց պատմական նվազագույնի նշագիծը: Փորձագետների հավաստմամբ, լարիի նման տատանումը պայմանավորված է բանկերի եւ միկրոֆինանսական կազմակերպությունների կողմից իրականացվող քաղաքականությամբ: Մասնավորապես, որպես լարիի

արժեքկման պատճառ, նշվում է բանկերի կողմից իրականացվող ոչ պրոֆիտային գործունեությունը, ինչը նպաստում է տնտեսության ոլորտում մրցակցության վերացմանը:

Դեկտեմբերի 1-ին լարիի կուրսը արժեքկման կապակցությամբ, Վրաստանի Ազգային բանկը հանդես եկավ հայտարարու-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՏՐՈՒԿ ԱՃ ԶԻ ԱՊԱՀՈՎՎԻ, ԱՌԱՆՅՈՒՄ ԱՐՄԱՏԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Նոյեմբերի 29-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկյազվիլու նախագահությամբ անցկացվեց նորանշանակ կառավարության անդրանիկ նիստը:

Ինչպես նիստում նշեց Գիորգի Կվիրիկյազվիլին, առանց արմատական փոփոխությունների, տնտեսական կտրուկ անցի ապահովվի: Նրա խոսքով, տարածաշրջանի երկրներում տնտեսական աճի տեմպերի նվազեցումը վավերացվել է 2014 թվականի երկրորդ կեսից:

- Չորս կեսից բաղկացած մեր կառավարական ծրագիրը ներառում է կոնկրետ, ինչպես կարճաժամկետ, այնպես էլ՝ երկարաժամկետ քայլեր: Դրա համալիր ու իրատեսական իրականացումը կստեղծեն բացարձակապես նոր հնարավորություններ, երկիրը կկանգնեցնեն արագ եւ անշրջելի զարգացման ուղղու վրա:


Ուստի, ելնելով դրանից, առանց արմատական փոփոխությունների, տնտեսական կտրուկ անցի ապահովվի, ինչը անհրաժեշտ է մարդկանց աշխատանքով ապահովելու եւ նրանց եկամուտների բարձրացման համար,- հայտարարեց վարչապետը:

Անդրադառնալով օնլայն վարկերի թեմային՝ վարչապետը նշեց, որ դրանք կդրվեն արգելքի տակ: Ինչպես հայտարարեց Գիորգի Կվիրիկյազվիլին, Ազգային բանկը պատրաստում է սպառողների իրավունքների պաշտպանության փաթեթ, ըստ որի, օնլայն վարկերի հանձնումը կարգելվի: Վարչապետի խոսքով, 2017 թվականի հունվարի 1-ից մինչև 10 հազար լարի, իսկ 2018 թվականից մինչև 200 հազար լարի փոքր վարկերը կտրվեն միայն ազգային տարադրամով:



Խոսելով ենթակառուցային նախագծերի իրականացման մասին՝ վարչապետը կառավարության նիստում հայտարարեց, որ 2017-2020 թվականներին միայն բյուջետային ներդրումներով ծրագրված է իրականացնել ավելի քան 14 միլիարդ լարի արժողությամբ ենթակառուցային նախագծեր:

Ինչպես նիստում նշեց Գիորգի Կվիրիկյազվիլին, առանց արմատական փոփոխությունների, տնտեսական կտրուկ անցի ապահովվի, ինչը անհրաժեշտ է մարդկանց աշխատանքով ապահովելու եւ նրանց եկամուտների բարձրացման համար,- հայտարարեց վարչապետը:



ԿՈՒՐԱՍՏԱԿԱՆ ԵՎ ԴԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ ՖԻԴԵԼ ԿԱՍՏՐՈՆ

Նոյեմբերի 26-ին, կյանքի 91-րդ տարում, մահացել է Կուրայի հեղափոխության առաջնորդ Ֆիդել Կաստրոն: Կաստրոյի մահվան լուրը պետական հեռուստատեսությամբ հայտնել է երկրի Պետական խորհրդի եւ նախարարների խորհրդի ղեկավար Ռաուլ Կաստրոն:



Թաղման արարողությունը տեղի կունենա Սանտյագո դե Կուբայի Սուրբ Իփիգենիայի գերեզմանատանը, քաղաք, որն անվանում են կուբայական հեղափոխության օրրան: Կաստրոյի մահվան կապակցությամբ, Կուբայում հայտարարվել է 9-օրյա սուգ: Սուգ է հայտարարվել նաեւ Բոլիվիայում, Ուրուգվայում, Վենեսուելայում, Ալժիրում եւ Նիկարագուայում:

ԹՈՒՐՔԻԱ ԵՐՊՈՂԱՆԸ ՄՊԱՌՆՈՒՄ ԵՍ ԵՐՊՈՂԱՆԻՆ

Անկարան Սիրիայում ռազմական գործողություններ է սկսել, որպեսզի վերջ դնի Բաշար Ասադի կառավարմանը: Այս մասին նոյեմբերի 30-ին հայտարարեց Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիպ Էրդողանը:

- Ասում են, թե Սիրիայում սպանվել է 600 հազար մարդ, սակայն, ես կարծում եմ, որ սպանվել է շուրջ մեկ միլիոն մարդ: Որտե՞ղ է ՄԱԿ-ը, ի՞նչ է անում: Մենք երկար ենք համբերել, սակայն վերջիվերջո ստիպված ենք «սիրիական ազատ բանակի» հետ մտնել Սիրիա»,- հայտարարել է Էրդողանը: Նրա խոսքով, Թուրքիան հավակնություններ չունի սիրիական հողերի նկատմամբ, որոնք «պետք է պատկանեն իրենց տերերին»:

ՌՈՒՍԱՍՏԱՆ-ԹՈՒՐՔԻԱ ՊՈՒՏԻՆԸ ԶԳՈՒՇԱՑՐԵՑ ԵՐՊՈՂԱՆԻՆ

Էրդողանի հայտարարության հաջորդ օրը կայացավ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի եւ Թուրքիայի նախագահ Էրդողանի հեռախոսազրույցը: ՌԴ նախագահը զգուշացրեց Թուրքիայի նախագահին: Պաշտոնական Կրեմլի փոխանցմամբ, Թուրքիայի նախագահը բացատրություն է տվել Պուտինին Ասադին տապալելու հայտարարության առնչությամբ: Հեռախոսազրույցից հետո, Էրդողանը հետ է կանգնել իր խոսքից: Նա հայտարարել է, թե իրենց ռազմական գործողություններն ուղղված են ոչ թե կոնկրետ անձի, այլ անարդարության խմբավորումների դեմ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՄԱԿ-Ը ԿԱՆԻ ՀՆԱՐԱՎՈՐԻՆԸ ԲՈՆԱԶԱՎԹՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Վրաստանի հետ արդյունավետ համագործակցության ապահովման համար: Հանդիպմանը կողմերը քննարկեցին նաեւ տարածաշրջանում ստեղծված իրավիճակը, անդրադարձան Վրաստանի բռնազավթված տարածքների հարցին: Վրաստանի նախագահը մտահոգություն հայտնեց Ռուսաստանի պետդոմայի կողմից

Աբխազիայի վարչակազմի հետ կնքած այսպես կոչված Միացյալ ռազմական խմբավորման ստեղծման մասին համաձայնագրի վավերացման կապակցությամբ: Գիորգի Մարգվելաշվիլին անդրադարձավ նաեւ 2017 թվականի համար ծրագրված հանրաքվեի թեմային, ըստ որի, Ցխինվալիի բռնազավթված տարածքը պետք է միավորվի Ռուսաստանի հետ, եւ հայտարարեց, որ դրա անցկացման

դեպքում, Ռուսաստանը կկատարի հերթական քայլը Վրաստանի տարածքների բռնազավթման ուղղությամբ: Իր հերթին, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պան Գի Մունը հայտարարեց, որ կազմակերպությունն առանձնակի ուշադրություն է դարձնում Վրաստանի բռնազավթված տարածքների թեմային եւ հնարավորինը կանի ստեղծված իրավիճակի կարգավորման համար:

դեպքում, Ռուսաստանը կկատարի հերթական քայլը Վրաստանի տարածքների բռնազավթման ուղղությամբ: Իր հերթին, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պան Գի Մունը հայտարարեց, որ կազմակերպությունն առանձնակի ուշադրություն է դարձնում Վրաստանի բռնազավթված տարածքների թեմային եւ հնարավորինը կանի ստեղծված իրավիճակի կարգավորման համար:

ՎՐԱՍՏԱՆ-ԵՎՐԱՍԻՈՒԹՅՈՒՆ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՍՏԱԳՈՐԾԱԿՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՅՄԱՆ ԵՎ ԸՆԴԱՅՆՄԱՆ ՀԱՐՅԵՐՆ ԷԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րակոմիսար Սեսիլիա Մալմստերենի, Եվրախորհրդի նախագահ Դոնալդ Տուսկի, Եվրամիության արտաքին հարաբերությունների եվրակոմիսար Ֆրեդերիկա Մոգերինի, ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Ենս Ստոլտենբերգի, պաշտոնական այլ անձանց հետ:

Եվրամիության կառույցների ղեկավարների հետ հանդիպմանը քննարկվեցին Վրաստան-Եվրամիություն Ասոցիացիայի կազմակերպության ծրագրված միջոցառումների իրականացման, Վրաստանին անայցեքային պայմանակարգի շնորհման, առեւտրատնտեսական, մշակութային կապերի խորացման, Վրաստանի բռնազավթված տարածքներում իրավիճակին, տարածաշրջանային անվտանգության, Վրաստանում իրականացվող բարեփոխումների հետ առնչվող հարցեր:

Եվրամիության կառույցների ղեկավարների հետ հանդիպմանը քննարկվեցին Վրաստան-Եվրամիություն Ասոցիացիայի կազմակերպության ծրագրված միջոցառումների իրականացման, Վրաստանին անայցեքային պայմանակարգի շնորհման, առեւտրատնտեսական, մշակութային կապերի խորացման, Վրաստանի բռնազավթված տարածքներում իրավիճակին, տարածաշրջանային անվտանգության, Վրաստանում իրականացվող բարեփոխումների հետ առնչվող հարցեր:

Եվրամիության կառույցների ղեկավարների հետ հանդիպմանը քննարկվեցին Վրաստան-Եվրամիություն Ասոցիացիայի կազմակերպության ծրագրված միջոցառումների իրականացման, Վրաստանին անայցեքային պայմանակարգի շնորհման, առեւտրատնտեսական, մշակութային կապերի խորացման, Վրաստանի բռնազավթված տարածքներում իրավիճակին, տարածաշրջանային անվտանգության, Վրաստանում իրականացվող բարեփոխումների հետ առնչվող հարցեր:

ԾՐԱԳԻՐ

ՕՏԱՐԱՅՎՈՒՄ ԵՎ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ, ՆԱՎԹԻ ԵՎ ԳԱԶԻ ԿՈՐՊՈՐԱՑԻԱՆԵՐԻ 25 ՏՈՎՈՍԸ

Վարչապետ Գիորգի Կվիրիկյազվիլին խորհրդարանի նիստում հայտարարեց, որ կառավարությունը ծրագրում է օտարացնել Վրաստանի երկաթուղու, նավթի եւ գազի կորպորացիաների 25 տոկոսը:

- Մենք հետևում ենք բորսաների իրավիճակին: Ներդրումնային մի քանի բանկերի հետ բանակցություններ ենք վարում երկաթուղու, նավթի եւ գազի կորպորացիաների 25 տոկոսը բորսաներում տեղադրելու հարցով: Եթե լինի համապատասխան շուկայական մրցակցություն, մենք այդ որոշումը կընդունենք: Մենք ցանկանում ենք սպասել ձեռնադր ժամանակահատվածին: Այդ առումով, անցյալ տարին իրականում նպաստավոր ժամանակահատված չէր: Պա զգուշություն է ճիշտ կատարված քայլ է պահանջում,- հայտարարեց Կվիրիկյազվիլին:

Իսկ աղբյուրներից հայտնվեց, որ Վրաստանի կառավարությունը պատրաստ է քննարկել Վրաստանի նավթի եւ գազի կորպորացիայի բաժնետոմսերի ձեռքբերման հնարավորությունը, եթե վաճառքի վերաբերյալ լինի պաշտոնական հայտարարություն,- այս մասին Trend հրատարակչությանը հայտարարեց SOCAR Georgia-ի աղբյուրը:

«Ղեռնես կոնկրետ ոչինչ ասել հնարավոր չէ: Եթե պաշտոնապես հայտարարվի բաժնետոմսերի վաճառքի մասին, մենք այդ հարցը կքննարկենք»,- հայտարարել է աղբյուրը:

«Ղեռնես կոնկրետ ոչինչ ասել հնարավոր չէ: Եթե պաշտոնապես հայտարարվի բաժնետոմսերի վաճառքի մասին, մենք այդ հարցը կքննարկենք»,- հայտարարել է աղբյուրը:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԾԱՐԺԱԿԱՆ ՍԵՐՎԻՍ-ԿԵՆՏՐՈՆ RS CAR-Ը ԿՄՊԱՍԱՐԿԻ ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԻՆ

Դեկտեմբերի 5-28-ը եկամուտների ծառայության շարժական սերվիս-կենտրոնը՝ RS CAR-ը, սպասարկում կմատուցի այն տարածաշրջաններում, որտեղ եկամուտների ծառայության սպասարկման սերվիս-կենտրոններ եւ շրջանային ներկայացուցչություններ չկան: Ծարժական սերվիս-կենտրոնները (միկրոավտոբուսները) հազեցված են արդի տեխնիկական միջոցներով: Հետևաբար, հարկատուներին տրվում է հնարավորություն իրենց համար հարմար վայրում, առանց բնակավայրերից դուրս գալու, ժամանակին ստանալ տարբեր տեսակի էլեկտրոնային սպասարկումներ: Ծարժական սերվիս-կենտրոնների օգնությամբ հարկատուներին հնարավորություն է ընձեռվում ստանալ էլեկտրոնային հետեյալ սպասարկումները. խորհրդատվություններ՝ Վրաստանի հարկային օրենսգրքի եւ հարցերի, օրվա, ինչպես նաեւ աշխատանքային ժամերի մասին RS CAR ծառայության տեղադրավայրի հասցեն.

մապատասխան նորմատիվ ակտերի օգտագործման հարցով եկամուտների ծառայության էլեկտրոնային էջից օգտվելու նպատակով, ավտոմատիզացման արդյունքում դիմումների ընդունման եւ արձագանքման, միկրո եւ փոքր գործարարության ու ֆիքսացված հարկի հարկատուի կարգավիճակի շնորհման կամ անվավեր ճանաչման մասին, բարձրալեռ բնակավայրերում արտադրության կարգավիճակի շնորհման կամ դրա դադարեցման, կամ ընդհատման դիմումի ընդունման մասին: Միաժամանակ, իրականացվում է եկամուտների ծառայության իրավասության շրջանակներում համապատասխան տեղեկանքների (հարկային պարտքի, հարկատուի գրանցման, ՀԱՀ-ի գրանցման, եկամուտների եւ այլն) հանձնումը եւ այլն:

Ստորեւ, ներկայացնում ենք ըստ տարածքների, օրվա, ինչպես նաեւ աշխատանքային ժամերի մասին RS CAR ծառայության տեղադրավայրի հասցեն.

Թեթիժղարո. Թամար թագուիու փողոց 34, վարչության հարակից տարածք, ղեկտեմբերի 6-ին, ժամը 10:00-17:00-ը: Կասպի. Սասկաձեի 68, սակրեբուլոյի շենքի մոտակայքում, ղեկտեմբերի 8-ին, ժամը 10:00-17:00-ը: Աղիգենի.

Թամար թագուիու փողոց, վարչության շենքի հարակից տարածքում, ղեկտեմբերի 12-ին, ժամը 10:00-17:00-ը: Ասպինձա. Թամար թագուիու փողոց, TBC բանկի հարակից տարածքում, ղեկտեմբերի 13-ին, ժամը 10:00-17:00-ը: Նիւնոմինդա. Պուշկինի փողոց, վարչության շենքի հարակից տարածքում, ղեկտեմբերի 12-ին: Բակուրիանի. Թամար թագուիու փողոց, ոստիկանության շենքի հարակից տարածքում, ղեկտեմբերի 26-ին, ժամը 10:00-17:00-ը:

Շարաքից շարաք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԱԴՐԱՍ



საქართველოს ეროვნული ბანკი National Bank of Georgia

ՀԻՊՈԹԵԿԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ ԱՆՅՈՒՄԸ ԼԱՐԻԻ ԿՆԱՐՈՒՆԱԿՎԻ ՄԻՆՉԵՎ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԸ

Վրաստանի Ազգային բանկի պաշտոնական կայքում տեղադրված հայտարարության համաձայն, դոլարով տրված հիպոթեքային վարկերի անցումը լարիի, կմեկնարկի 2017 թվականի հունվարի 1-ից եւ կշարունակվի երկու ամիս:

Հիպոթեքային վարկերը լարիով փոխարինումը երկրի էկոնոմիկայի դոլարի մակարդակի նվազեցմանն ուղղված կառավարության ծրագրի մասն է եւ հետապնդում է ազգային տարադրամի կուրսի աջակցության նպատակ: Ազգային բանկի տվյալներով, նոյեմբերի 1-ի դրությամբ, լարիով տրված վարկերի ընդհանուր ծավալը կազմում է ընդհանրապես վարկերի ծավալի 36,19 տոկոսը, իսկ ազգային տա-

րադրամով դեպոզիտները ընդհանուր ներդրումների 30,32 տոկոսը: Պետության կողմից փոխանկման կուրսի տարբերության նպաստների հանձնման ծրագիրը կառնչվի բանկային վարկերի ընդհանուր գումարին կամ դրա մի հատվածին (մինչեւ 100 հազար լարի), որոնք անշարժ գույքի գրավի դիմաց տրվել են դոլարով մինչեւ 2018 թվականի հունվարի 1-ը, եթե դրանց մնացորդային արժեքը 2017 թվա-


կանի հունվարի 1-ի համար չի գերազանցում ընդհանուր գումարի 90 տոկոսը:

Ընդամենը, Ազգային բանկը նշում է, որ սուբսիդացումը կիրականացվի միայն 100 հազար լարիի շրջանակներում, մնացած գումարը վարկ վերցնող կարող է թողնել դոլարով կամ անցկացնել լարիով ըստ հայեցողության:

«Բանկերը պարտավոր են այդ ծրագրի մասին տեղեկացնել բոլոր սպառողներին, ովքեր հնարավորություն ունեն ծրագրի օգնությամբ կարգավորել հարցերը: Գործընթացի աջակցության նպատակով, Ազգային բանկը վերացնում է

նախնական փոխանակման համար կոմիսիոն մուծումները»,- ասված է ազգային բանկի հայտարարության մեջ:

Նշվում է նաեւ, որ կոմերցիոն բանկերը լարիի վրա լարիով փոխանակված վարկերը կշարունակեն հանձնել շուկայական տոկոսադրույթով: Բանկերը պարզաբանելու են սպառողներին, որ վարկի լարիով փոխանակումը իրականացվելու է պաշտոնական փոխանակման կուրսից 0,2 լարիով պակաս փոխարժեքով: «Փոխանակման կուրսերի տարբերությունը կմարվի պետական բյուջեից»,- պարզաբանել է Ազգային բանկը:



ԱՐՁԱԿՈՒՐՆԵՐԸ՝ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-ԻՑ

Ինչպես տեղեկացրել է Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունը, հանրային դպրոցներում ձմեռային արձակուրդները կսկսվեն դեկտեմբերի 30-ից եւ կշարունակվեն մինչեւ հունվարի 14-ը: Ինչ վերաբերում է մասնավոր դպրոցներին, ապա դրանցից յուրաքանչյուրը ինքնուրույն է որոշել արձակուրդի ժամկետը:

Թբիլիսիի հանրային մանկապարտեզներում ձմեռային արձակուրդները կսկսվեն դեկտեմբերի 29-ից եւ կշարունակվեն մինչեւ հունվարի 9-ը:

ՆՈՂԱՐ ԽԱՂՈՒՐԻՆ՝ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Ֆինանսների նախկին նախարար Նոդար Խաղուրի Նշանակվել է մրցակցության գործակալության նախագահ: Համապատասխան հրամանագիրը, որը ստորագրել է վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, հրապարակվել է Վրաստանի կառավարության պաշտոնական կայք-էջում:



Մինչեւ Նոդար Խաղուրու նշանակումը, գործակալությունը գլխավորում էր Գիորգի Բարաբաձեն:

ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ (2 դեկտեմբերի)

Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի հետեյակ կուրսը.

Table with 3 columns: ՏԱՐԱԴՐԱՄ, ԱՈՔ, ՎԱՃԱՈՔ. Rows include ԱՄՆ ԴՈԼԱՐ, ԵՎՐՈ, ՌՈՒԲԼԻ, ԴՐԱՄ.

ԼԱՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑԵՑ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻ ՆՇԱԳԻԾԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

թյամբ, որտեղ, մասնավորապես, նշված է. «Այսօր փոխանկման կետերում լարիի կուրսի անկումը պայմանավորված չէ երկրում տնտեսական գործընթացների զարգացմամբ: Անցյալ ամիս լարիի արժեզրկման գլխավոր պատճառը դոլարի կուրսի անբարձրացումն էր, որը տարադրա-

մի շուկայում հասավ 2003 թվականից հետո ամենաբարձր ցուցանիշին: Դրան ավելացավ բնակչության կողմից լարիի պահանջարկի կտրուկ բարձրացումը: Մեր համոզմամբ, ներկա փուլում լարիի փոխանկման կուրսը դուրս է եկել այն շրջանակներից, որոնք պայմանավորվում են հիմնարար գործոնները: Հետեւաբար, մոտ ժամանակներս մենք սպա-

սում ենք արժեզրկման դադարեցում եւ լարիի կուրսի ամրացում:

Ելնելով վերոնշյալից՝ այսօր դոլարի գինը գերազանցված է, եւ բնակչությանը խորհուրդ ենք տալիս չընդունել հապտապ որոշումներ, որոնք, ամենայն հավանականությամբ, կվնասեն հենց իրենց»,- ասված է Ազգային բանկի տարածած հայտարարության մեջ:

ԱԶԱՐԻԱ

ՂՎԿԻԹ ԳԱԲԱԻՉԵՆ՝ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ



Նոյեմբերի 28-ին Աջարիայի Գերագույն խորհրդի նորընտիր կազմն անցկացրեց իր անդամիկ նստաշրջանը: Նիստում Աջարիայի Գերագույն խորհրդի նախագահ ընտրվեց «Վրացական երազանքից» ընտրված մեծամասնական պատգամավոր Դավիթ Գաբաիձեն: Նրա թեկնածությունը պաշտպանեց մեծամասնական 14 պատգամավոր: Քվեարկությանը չմասնակցեցին «Միասնական ազգային շարժում» եւ Նի-

նո Բուրջանաձեի կուսակցությունից ընտրված պատգամավորները: Ինչ վերաբերում է «Հայրենասերների ալյանսի» պատգամավոր Դավիթ Թարխան-Մուրավիին, նա չներկայացավ նիստին:

ԶՈՒՐԱԲ ՊԱՏԱՐԱԶԵՆ՝ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին՝ Աջարիայի Գերագույն խորհրդում ներկայացված էր քաղաքական սուբյեկտների հետ քաղաքատվությունից հետո, Աջարիայի կառավարության ղեկավարի պաշտոնի համար ներկայացրեց Զուրաբ Պատարաձեի թեկնածությունը:



ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՄԵՐ ԳԼԽԱՎՈՐ ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՆ Է»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

- Իհարկե, հետեւողական ձգտումը ԵՄ չափորոշիչներին մեր գլխավոր առաջնահերթությունն է, եւ իհարկե, ՆԱՏՕ-ին ինտեգրվելն ու անդամակցությունը անընդելի են, որոնք ունի մեր պետությունը: Այդ ուղղությամբ, մենք այսօր ունենք բազմաթիվ գործիքներ, որոնք ծրագրում ենք կիրառել մինչեւ վերջ: Եվրամիության հետ ստորագրվել է Ասոցիացման համաձայնագիրը, մենք իրականացրել ենք համապատասխան բարեփոխումներ, ավարտվել է անայցեգրային պայմանագրի ընդունման գործողության ծրագրով նախատեսված միջոցառումները, եւ հուսով ենք, որ մոտ ապագայում կավարտվեն Եվրամիության կողմից համապատասխան որոշման ընդունման ընթացակարգերը,- հայտարարեց Գիորգի Կվիրիկաշվիլին:

Նա անդրադարձավ նաեւ ԱՄՆ-ի հետ ռազմավարական համագործակցության հարցին եւ նշեց, որ այդ համագործակցությունը նպաստում է երկրի պաշտպանունակության զարգացմանն ու ժողովրդավարական ինստիտուտների եւ էկոնոմիկայի առաջընթացին:

Գիորգի Կվիրիկաշվիլու խոսքով, երկրի արտաքին քաղաքականության գլխավոր առաջնահերթություններին է նաեւ Ռուսաստանի հետ լիցքաթափման քաղաքականության իրականացումը: Ինչպես նշեց վարչապետի պաշտոնակատարը, երկրի տարածքային ամբողջականության եւ ինքնիշխանության հարցով ոչ մի փոխգիծում չի լինի, սակայն վրացական իշխանությունների նպատակն է աստիճանաբար բարելավել Ռուսաստանի հետ ամբողջատնտեսական հարաբերությունները, ինչպես նաեւ նախադրյալներ ստեղծել առկա հիմնախնդ-

րի երկարաժամկետ կարգավորման համար:

Նրա խոսքով, Վրաստանը կշարունակի բարիդրացիական հարաբերություններ զարգացնել հարեւան երկրների հետ:

- Մենք շատ կարեւոր ռազմավարական բնույթի հարաբերություններ ունենք Ադրբեյջանի հետ, ռազմավարական կապեր՝ Թուրքիայի եւ ավանդական բարիդրացիական հարաբերություններ՝ Հայաստանի հետ,- ասաց նա:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԱՌԱՋՆԵՐՁՅԻ ՆԱԽԱՐԱՅՄԱՆ Է

Անդրադառնալով ներքին քաղաքական կյանքին՝ վարչապետի պաշտոնակատարը նշեց, որ հաջորդ տարվա համար գործադիր ծրագրում է տնտեսական չորս տոկոսի աճ, թեպետ բոլոր նախադրյալները կան այդ ցուցանիշի գերազանցման համար: Վարչապետի թեկնածուի խոսքով, տնտեսական բարեփոխումների ուղղությամբ ծրագրված միջոցառումների անցկացումը երկրի բնակչության կենսամակարդակի բարձրացման, գործազրկության նվազեցման, սոցիալական պայմանների բարելավման գլխավոր նախադրյալն է: Ինչպես նշեց Գիորգի Կվիրիկաշվիլին, ներկա դրությամբ, Վրաստանի տնտեսական աճը համապատասխանում է տարածաշրջանում ստեղծված իրավիճակին, ընդգծեց, որ 2004-2012 թթ. տնտեսական աճը ամենացածրն էր տարածաշրջանում:

«ՄԵՆԷ ԽՈՒՄՓՈՒՄ ԵՆԷ ԱՆԻՐԱՏԵՍԱԿԱՆ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԻՑ»

Խոսելով սոցիալական հարցերի մասին՝ Գիորգի Կվիրիկաշվիլին նշեց, որ 2017թ. պետությունը կենսաթոշակ-

ների ավելացում չի ծրագրված:

- Մենք չենք պատրաստվում 2017-ի պետությունը բարձրացնել կենսաթոշակները: Թաքցնելու ոչինչ չկա, եւ մենք չենք պատրաստվում ստել, դա իրականությունն է: 2018 թ.-ից, երբ մենք կանցնենք նոր համակարգի, կենսաթոշակի չափը կբերենք գնաճի այն մակարդակին, որը կլինի: Մենք նախընտրական փուլում էլ խուսափում էինք անիրատեսական խոստումներից,- ընդգծեց Գիորգի Կվիրիկաշվիլին: Ինչ վերաբերում է կառավարության նոր կազմին, ապա, ինչպես հայտարարեց վարչապետի թեկնածուն, նախարարների նոր կաբինետի համար ինքը ստանձնում է ողջ պատասխանատվությունը:

«ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ՄԵԾԱՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԻԹԽԱՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ Է»

Անդրադառնալով երկրի օրենսդիր մարմնում «Վրացական երազանքի» սահմանադրական մեծամասնություն ունենալու թեմային՝ Գիորգի Կվիրիկաշվիլին հայտարարեց, որ դա իրենք որպես արտոնություն չեն ընկալում: Նրա խոսքով, սահմանադրական մեծամասնությունը «Վրացական երազանքից» հնարավորություն է ընձեռում՝ ընդունել երկրի զարգացումն ապահովելու համար կարեւոր եւ արագ որոշումներ: Գիորգի Կվիրիկաշվիլու խոսքով, դա վիթխարի պատասխանատվություն է երկրի բնակչության առջեւ, եւ կառավարող կուսակցությունը լրիվությամբ գիտակցում է:

- Բոլոր որոշումները կընդունվեն ի բարորություն ժողովրդի, երկրի շահերի պահպանմամբ ու երկրի զարգացման համար,- ընդգծեց Գիորգի Կվիրիկաշվիլին:

Պատրաստեց ՄԻՄՈՆ ԿԻԼԱԶԵՆ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ՎԱՏԱՀՈՒԹՅԱՆ ԲՎԵ՝ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ՈՒ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Գիորգի Կվիրկելաշվիլի - վարչապետ.



49 տարեկան է, ավարտել է Թբիլիսի պետական բժշկական ինստիտուտը, Թբիլիսիի Իվ.Ջավախիշվիլու անվան պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը, ԱՄՆ Իլլինոյսի համալսարանի մագիստրատուրան: Տարբեր պաշտոններ է զբաղեցրել միկրոֆինանսական կազմակերպություններում և կոմերցիոն բանկերում: 1997թ.-ից որպես արտաքին տնտեսական հարաբերությունների ծառայության պետի տեղակալ, աշխատել է Վրաստանի պետական գրասենյակում: 1999-2004 թթ. եղել է Վրաստանի խորհրդարանի պատգամավոր: 2012թ. հոկտեմբերից մինչև 2015թ. սեպտեմբերը եղել է Վրաստանի էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարը, 2015թ. սեպտեմբերից մինչև 2015թ. դեկտեմբերը՝ արտաքին գործերի նախարարը, իսկ 2015թ. դեկտեմբերից՝ վարչապետ: Տիրապետում է անգլերենին, ռուսերենին:

Դմիտրի Քունսիշվիլի - առաջին փոխվարչապետ, ֆինանսների նախարար.



42 տարեկան է, ավարտել է Թբիլիսիի Իվ.Ջավախիշվիլու անվան պետական համալսարանի ֆիզիկայի և տնտեսագիտական ֆակուլտետները: Աշխատանքային գործունեությունն սկսել է 1999թ.-ից, տարբեր պաշտոններ է զբաղեցրել միջազգային և տեղական ֆինանսական կազմակերպություններում, կոմերցիոն բանկերում: 2012-2015 թթ. եղել է Վրաստանի էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարի առաջին տեղակալը: 2015թ. մարտից մինչև սեպտեմբերը զբաղեցրել է Թբիլիսիի փոխքաղաքապետի պաշտոնը: 2015թ. սեպտեմբերից մինչև 2016թ. հոկտեմբերը Վրաստանի էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարն էր: Տիրապետում է անգլերենին, ռուսերենին:

Կախի Կալաձե-փոխվարչապետ, էներգետիկայի նախարար.



38 տարեկան է, ավարտել է Թբիլիսիի Իվ.Ջավախիշվիլու անվան պետական համալսարանը, ունի պատմաբանի մասնագիտություն: Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստ էր, տարբեր ժամանակներում խաղացել է Թբիլիսիի «Դինամո», Կիելի «Դինամո», իտալական «Միլան», «ժենոա» ակումբներում, երկրի ազգային հավաքականում: Մարզական կարիերան ավարտելուց հետո, զբաղվել է գործարարությամբ, հիմնել է «Կալա ֆոնդ» հիմնադրամը, «Կալա կապիտալ» միջազգային ներդրումային խումբը: 2012-2016 թթ. Վրաստանի փոխվարչապետը, էներգետիկայի նախարարն է: 2013թ. նոյեմբերից «Վրացական երազանք» կուսակցության գլխավոր քարտուղարն է: Տիրապետում է իտալերենին, ռուսերենին, անգլերենին:

Գիորգի Գախարիա - էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարար, 41 տա-



րեկան է, ավարտել է Թբիլիսիի Իվ.Ջավախիշվիլու անվան պետական համալսարանի քաղաքագիտության, պատմության ֆակուլտետները, Մոսկվայի Լոմոնոսովի անվան համալսարանը, նույն համալսարանի բարձրագույն բիզնես-դպրոցը: Տարբեր պաշտոններ է զբաղեցրել միջազգային հասարակական կազմակերպություններում, դասախոսել է Մոսկվայի համալսարանում: 2013-2016 թթ. Վրաստանի բիզնես-օմբուդսմենն էր: 2014-2016 թթ. եղել է տնտեսական հարցերով Վրաստանի վարչապետի օգնական:

Ջուրաբ Ավալիձե - Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառուցների նախարար.



37 տարեկան է, ավարտել է Թբիլիսիի Իվ.Ջավախիշվիլու անվան պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը: Ունի տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան: Բուհն ավարտելուց հետո, շուրջ 15 տարի աշխատել է ֆինանսական տարբեր կազմակերպություններում: Եղել է Վրաստանի տնտեսական զարգացման փոխնախարարը:

Թեա Ծուլուկիանի - արդարադատության նախարար.



1992 թ.-ին ավարտել է Թբիլիսիում միջնակարգ դպրոցը, ապա Ֆրանսիայի Լիոնի լիցեյը և Թբիլիսիի Իվ.Ջավախիշվիլու անվան պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը, զուգահեռաբար սովորել է ԱԳ նախարարությանն առընթեր դիվանագիտական ակադեմիայում: Ավարտել է Ֆրանսիայի պետական կառավարման դպրոցը, ստացել մագիստրոսի գիտական աստիճան:

Աշխատել է մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում, եղել է դատական ժամանակացույցի կոմիտեի անդամ:

2010 թվականին՝ որպես մարդու իրավունքների հարցերով նախագահի խորհրդական, միացել է «Ազատ ժողովրդավարներ» կուսակցությանը, եղել է կուսակցության նախագահի տեղակալ: 2012 թվականի խորհրդարանական ընտրություններին Թբիլիսիի Նաձալադեիի ընտրատարածքից ընտրվել է մեծամասնական պատգամավոր, իսկ հոկտեմբերից՝ 4 տարի անընդմեջ, զբաղեցնում էր արդարադատության նախարարի պաշտոնը:

Վիկտոր Դուլիձե - Եվրոպական և Եվրատլանտյան կառույցների ինտեգրման հարցերով պետնախարար.



43 տարեկան է, ավարտել է Թբիլիսիի Իվ.Ջավախիշվիլու անվան պետական համալսարանի միջազգային իրավունքի և հարաբերությունների ֆակուլտետը, ԵԱՏՕ-ի պաշտպանության քոլեջը: Աշխատանքային գործունեությունը սկսել է Վրաստանի արտաքին գործերի նախարարության համակարգում: Եղել է ԵԱՏՕ-ի վարչության պետի տեղակալը, նույն

դեպարտամենտի երկկողմ հարաբերությունների վարչության պետը, Բելգիայում և Լիդերլանդներում Վրաստանի դեսպանության խորհրդականը, Ավստրիայում և Դոմինգոյում Վրաստանի արտակարգ և լիազոր դեսպանը:

Եղել է «Ազատ ժողովրդավարներ» կուսակցության ցուցակում: 2010թ. ընտրվել է Թբիլիսիի սակրեբուլոյի անդամ, 2012-2014 թթ. եղել է Վրաստանի խորհրդարանի պատգամավոր, Եվրոպայի հետ ինտեգրման կոմիտեի նախագահ:

Տիրապետում է անգլերենին, ռուսերենին, ֆրանսերենին:

Միխեիլ Ջանելիձե - արտաքին գործերի նախարար.



35 տարեկան է, ավարտել է Գերմանիայի Վերդեն քաղաքի Յոհանաբերգի գիմնազիան, Թբիլիսիի Իվ.Ջավախիշվիլու անվան պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը, Ռուսաստանի միջազգային իրավունքի և Եվրոպական իրավունքի հատուկ դիվանագիտական ակադեմիան, Ֆրանսիայի Գրենոբլի բիզնեսի բարձրագույն դպրոցը, Կովկասի բիզնես-դպրոցը:

Տարբեր պաշտոններ է զբաղեցրել Վրաստանի էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարության համակարգում, եղել է արտաքին առևտրի և միջազգային հարաբերությունների դեպարտամենտի տնօրենը, ապա՝ փոխնախարարը: Տիրապետում է անգլերենին, գերմաներենին, ռուսերենին:

Դավիթ Սերգենկո - աշխատանքի, առողջապահության և սոցիալական պաշտպանության նախարար.



53 տարեկան է, ավարտել է Թբիլիսիի պետական բժշկական ինստիտուտը, Մոսկվայի բժիշկների որակավորման ինստիտուտը, Բեռլինի սրտաբանական ինստիտուտը, Զարվարդի բժշկական դպրոցը, Մեծ Բրիտանիայի Աբերդինի ինստիտուտը:

Որպես բժիշկ-մանկաբույժ՝ տարբեր տարիներին աշխատել է Սուխումի, Ռուսթավի հիվանդանոցներում, Վրաստանի գինված ուժերում, Վրաստանի սպորտի դեպարտամենտում, եղել է Սաչխերեի հիվանդանոց-պոլիկլինիկաների միավորման գլխավոր տնօրենը:

2012թ. Վրաստանի աշխատանքի, առողջապահության և սոցիալական պաշտպանության նախարարն էր:

Տիրապետում է վրացերենին, ռուսերենին, անգլերենին:

Սոգար Սուբար - Վրաստանի բռնազավթված տարածքներից բռնազաղթված անձանց և փախչողների նախարար.



52 տարեկան է, ավարտել է Թբիլիսիի Իվ.Ջավախիշվիլու անվան պետական համալսարանի պատմության, Թբիլիսիի հոգեւոր ակադեմիայի աստվածաբանության ֆակուլտետները: Աշխատանքային գործունեությունը սկսել է Վրաստանի Գիտությունների ակադեմիայի հնէագիտական կենտրոնում, եղել է Դմանիսիի շրջանի Բուսլեի գյուղի հանրային դպրոցի տնօրենը: 1993թ. մասնակցել է Աբխազիայի մարտական գործողություններին:

րին, ապա՝ որպես լրագրող, աշխատել է տարբեր լրատվամիջոցներում, այդ թվում՝ «Ազատություն» ռադիոյի վրացական խմբագրությունում: Եղել է «Ազատության ինստիտուտի» ոչ կառավարական կազմակերպության «Օրենքի գերակայություն» նախագծի տնօրենը: 2004-2009 թթ.՝ Վրաստանի ժողովրդական պաշտպանը, 2009թ. ՄԱԿ-ի մարդու իրավունքների պաշտպանության Գերագույն հանձնաժողովի խորհրդականների խորհրդի անդամ է: 2012-2014 թթ. զբաղեցնում էր պատիժների կատարման և պրոբացիայի նախարարի պաշտոնը, 2014թ.-ից բռնազաղթվածների և փախստականների նախարարն էր:

Տիրապետում է ռուսերենին և անգլերենին:

Ալեքսանդր Ջեջելավա - կրթության և գիտության նախարար.



43 տարեկան է, ավարտել է Թբիլիսիի Իվ.Ջավախիշվիլու անվան պետական համալսարանը, բիզնես-դպրոցը, Ջ.Վաշինգտոնի համալսարանը, Եվրասիայի կենտրոնական լիդերների ակադեմիան: Տարբեր պաշտոններ է զբաղեցրել տեղեկատվական տեխնոլոգիաների և բիզնես-զարգացման ոլորտներում, 2001թ. պետական ռեսուրսի ավտոմատիզացման նախագծով եղել է Հայաստանի արդարադատության նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների խորհրդատու: Տարիներ շարունակ աշխատել է նաև հարկային և բանկային ոլորտներում, ոչ կառավարական կազմակերպություններում, 2010թ.-ից՝ կրթության նախարարության համակարգում: 2016թ.-ից կրթության և գիտության նախարարն է: Տիրապետում է անգլերենին, ռուսերենին:

Լեւան Դավիթաշվիլի - գյուղատնտեսության նախարար.



38 տարեկան է, ավարտել է Թբիլիսիի Իվ.Ջավախիշվիլու անվան պետական համալսարանի տնտեսագիտական, միջազգային բիզնեսի ֆակուլտետները, բիզնեսի կառավարման մագիստրոս է: Տարբեր տարիների աշխատել է ապահովագրության պետական վերահսկողության ծառայությունում, ոչ կառավարական կազմակերպություններում, զբաղվել՝ գործարարությամբ, եղել է Վրաստանում գինու արտադրողների միության վարչության նախագահը: 2014-2016 թթ. Վրաստանի գյուղատնտեսության փոխնախարարն էր, 2016-ի հոկտեմբերից՝ նախարարի պաշտոնակատարը:

Տիրապետում է անգլերենին, ռուսերենին, իտալերենին:

Տարիել Խեչիկաշվիլի - սպորտի և երիտասարդության հարցերով նախարար.



46 տարեկան է, ավարտել է «Կաբադոնի» ինստիտուտը իրավագետի մասնագիտությամբ: Աշխատանքային գործունեությունը ընթացքում հիմնել է մի շարք սահմանափակ պատասխանատվության ընկերություններ, բիզնես խմբեր:

Տիրապետում է ռուսերենին, անգլերենին:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)